

բուսածը չվերջացած դրեթէ բազմութեան մի մասը դնաց. քանզի կէս դիշեր էր: Այսպիսի գործեր կարող էին մեծապէս փնասել նոր հիմնոված թատրոնին:

Եւ մանաւանդ թէ տեղիք տալ տկարամիտ մարդերի. փոխանակ իւրեանց գծագրութիւնը նոյն իսկ կարծեցեալ անկարգութեան ընդդէմ ուղղելու, փոխանակ իւրեանց մի վիշտ հասուցանողից բողոքելու, (եթէ կար) թշնամանք տեղալ բովանդակ թատրոնի վերայ, նախատել մարդիկ, որոնց կոշիկներէ իրացը արծառնի չէր լուծանել, հայհոյել նաեւ հանդիսականները եւ անդուռն բերանով եւ վատական ճամբարտակութեամբ զրպարտել բոլոր ազգը եւ կառապի ճիւղի պէս: փողոցից փողոց եւ տունից տուն վազելով դիմել մինչեւ ոստիկանութիւնը...

Արա հակառակ, գերատոններէ եւ գերաստուգեաց շնորհ, որպէս հասարակութեան ընդունելութեան հետ, կարող են մեծ ընթացք տալ թատրոնին:

Յոյս ունինք, որ Ազգը չլքանայ իւր ձեռքն ստուգեալը, որ ըստ օրէ թատրոն յաճախելով եւ այդ ոչ միայն թատրոնի նիւթական կեանքը ապահովելու այլ եւ բարոյական քաջակերութիւն տալու համար:

Այն մարդը, որ մի բարի գործի չէ օգնում, լուեկայն քարոզում է իւր անձի համար թէ այն, անորժան էր այն բարի գործին:

Եւ ի նշպէս պիտի միտթարվէինք մեք, եթէ մի քանի ժամանակից լսէինք, որ Հայոց ազգը Պօլսի մէջ կազմել է մի ընկերութիւն, մի փառաւոր թատրոն կանգնելու համար, որի շքեղութիւնը, յարմարութիւնը եւ այլ յաջողեցուցիչ որպիսութիւնները պիտի նպաստուար լինէին նորա մեծ յառաջդիմութեան: Եւ այդ թատրոնը, ներկայ սերունդի համար կը լինէր մի հոյակապ յիշատակի արձան, որի վերայ պարծանքով պիտի նայէին հայերը եւ որ պատկառելի պիտի կացուցանէր ազգը, ուրիշներէ առաջն ելոյց տալով նոցա, ազգի բարոյական զօրութեան եւ մի ապացոյցը:

Պակաս ուրախութիւն չզգայինք մեք, տեսանելով Զմիւռնիոյ մէջ Վատգորական անձնուրաց ընկերութեան հայախոս թատրոնը. այստեղ յաջող ենք համարում եւ դէպի նոցա ուղղել մեր առ ի սրտէ հնորհակալութիւնը եւ ընթացք ու յաջողութիւն մաղթել իւրեանց ջնաշխարհիկ ապարեղի մէջ:

Կեցցեն բոլոր հայ թատրոնը,

Կեցցեն եւ գերասանք.

Կեցցեն եւ գերաստուահիք,

Պարկեշտը եւ ժաշմանք:

Պէրս, 17 Դեկտեմբ. 1861: Մ. ՆԱՐԱՆԴՅԱՆ

Գրեթէ կէս գարու հնութիւն մը ունեցող սա տողերը, որչափ գեղեցիկ են եւ ջղուս. քանի մեծ գասեր ու ճշմարտութիւններ կը բարդուն անոնք, . . . կարծես թէ գեւ նոր

գրուած են, կամ երէկ հրատարակուած: Մ. Նալբանդեան Հայ թատրոնի զարգացմանը ջերմապէս նախանձանդիր, անոր ապագայ կատարելութեանը համար անձնակեր վարժապետ մը կը հանդիսանայ իւր այս գրութիւնով. բայց մեր են մեր Մկրտիչ Պէշիք-թաշեանները, Արապիոն Հէքիմեանները, Յակոբ Պալեանները, Ալթունարիւրները, Էքշիհանները, Օտեաններն եւ ուրիշները. ուր են 1855—1861ի Պարսկան Հայ թատրոնին ստեղծիչ անմահ մարմինները, որ այսօր ալ կարենան Հայ բեմը կանգուն պահել, մոքի եւ սրտի եղականապէս զարգացուցիչ եղող այդ վսեմ դպրոցը մատչելի ընել Հայուն. ահ, Հայ թատրոն չկայ այլ եւս Կ.Պօլսոյ մէջ, շատոնց փլած կորած է այն անյարբի կերպով եւ անյիշատակ . . ., առաջ փառացի անցաւ Հայ թատրոնին . . . :

Առ. Ասլանեան 1861ի Արեւելեան թատրոնին բաւական հոգածու եւ աշխատող կ'ըլլայ թէ եւ, բայց նոյն տարւոյն վերջը թաղասպետութենէն հրաժարելով, ալ չի կրնար շարունակել նուիրել իւր կարեւոր աշակցութիւնն Հայ թատրոնի վաստակողներուն, մանաւանդ՝ որ Ազգային եւ բժշկական նորանոր պաշտօններ հետզհետեւ իւր ժամանակները բոլորովին կը զբաղեցունէին:



## Ա Յ Ո Ւ Ր Յ Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ՄԱՐԿՈՍ ԳՐԵԿՈՐԵՍ ԶՈՐԱՅԵՆԻ ՄԱՐԿՈՍ

Ե. ԻճԵՒԼ-ԱՅԻՐԻ:

(Եւրոպայի Եւրոպայ)

Խաղաղը՝ Զառուհի մահից յետոյ նուաճման տենչանքով վառուած՝ շտապով դիմեցին (մուսլիմներէ) երկրները եւ մօտեցան Մոսկւին: Մուսլիմներէ գործը ծանրացաւ: Առեւելով այս լուրը Հիշամ կոչից իւր մօտ երանելի Հարաշին. . . Հարաշին մեկնեցաւ. որ քաղաքի մօտից նա անդնում էր, ոտի էր կանգնեցնում նորա բաակիշներին, եւ ով սրբազան պատերազմ կը ցանկանար, նա սալիս էր իւր հաւանութիւնն: Այդպէս շարունակ գործելով նա եկաւ Արաքսի՝ քաղաքը, ուր նորան արտասուելով դիմաւորեցին Զառուհի մարդիկը մեծ բազմութեամբ. ապա նա եկաւ իսլամ, որ նո-

բան դիմադրեց. Լարաշին պաշարեց եւ առաւ քաղաքը, բաժանելով նորա աւարը իւր զինուորների մէջ. իւրեքից մեկնելով նա տիրեց մի զինի միւսի ամրոցներ եւ բերդերի, մինչեւ եկաւ Պարսաւ, ուր բնակեցաւ:

Նոյն ժամանակ խաղանի որդին Ասորպատականում էր՝ սապատակելով, աւարի առնելով, գերելով եւ սպանելով. Վարդանակերտը նորանով պաշարուած էր. երկիւր կերելով, որ նա կը տիրէ քաղաքին, Լարաշին գաղտ մարդ ուղարկեց վարդանակերտացիների մօտ՝ նոցա իմացնելու իւր նոցա մօտ գաղտեան մասին, պատուիրելով նոցա համբերել... խաղաքը հեռացան քաղաքից, եւ երբ Լարաշին իւր գնդով այնտեղ եկաւ, գտաւ քաղաքը Թափուր թշնամուց. խաղաքը մեկնելով դիմեցին Արտաշէի, սակայն այնտեղից եւս հեռացան, իսկ Լարաշին բանակեցաւ Բաջարվանում. նորա մօտ եկան խառնիխառն բազմութեամբ աֆիգ (սպիտակ) պարսիկներ եւ ողջունեցին նորան, առելով՝ «Բեզ վայել է, ով առաջնորդ սրբազան պատերազմում եւ աւարառութեան մէջ», Լարաշին հաղթեց. 'Նա ի՞նչ գործ ունիմ այդ բանի հետ', նոյն պատեմականեցին. 'խաղաքը զօրքը բազկացած է 10.000 մարդուց, նոցա հետ են 5.000 գերի կամ շղթայած մուսլիմներ աֆուական անից. բանակած են չորս մօն հեռուի, Լարաշին չուէց դիշերով եւ հասաւ թշնամուն գիշերուայ վերջին, երբ նա դեռ քնած էր. նա սփռեց չորս կողմ իւր մարդիկը, որոնք շղթայապատեցին խաղաքներին արշալուստին. արեւը երեւալիս մուսլիմները իրենց սրերը նոցա դէմ մաշեցին եւ կտորեցին բլուրին, եւ ոչ մէկը չապրեցաւ: Ապա Լարաշին ապստեց գերի մուսլիմներին եւ բերեց նոցա իւր հետ Բաջարվան:

Երբ խաղաքաց Թափուրի որդին լուր առաւ, թէ ինչ արեց Լարաշին խաղաքաց զօրքի հետ, նա սաստիկ յանդիմանեց եւ պահարարակեց նոցա, առնանեց նոցա թոյլ եւ ախար եւ հեռացնեմ վրանց նոցա մէջ կռուի ցանկութիւն, այնպէս որ խաղաքը նորան խորհրդ տուին՝ ժողովել իւր մարդիկը եւ գնալ պատերազմել Լարաշիի հետ: Նա զօրք գուռ մարեց Ասորպատական դաւառից, եւ նորա հետ միացաւ մեծ բազմութիւն: Լարաշին նորա դէմ եկաւ, եւ երկու բանակներ՝ պտտահելով միմեանց Բարդանգ՝ դաւառում, բախեցան սաստկապէս. խաղաքը՝ լինելով թուով առաւել՝ դերեցին մուսլիմներին: Լարաշին քաջալերեց իւր մարդիկը, հրամայելով նոցա համբերել, եւ նոցա կրկին կռիւնեցան եւ արիաքար ձակապեցան թշնամու հետ: Երբ խաղաքներից գերուած մուսլիմները օգնուած թեան կոչեցին, նոցա ցնծութեան աղաղակ եւ ապամական կոչ արձակեցին, որով մէկը միւսին պատերազմելու քաջալերեցին. չկար մէկը, որ չլար, գիշարով գերիներին: Թշնամին մեծ կորուստով է վերջի է փախուստ գարձաւ եւ՝ հալածուելով մուս-

լիմներից՝ հասաւ Արտա՝ գետը, այստեղ մուսլիմները յետ գարձան, եւ ժողովեցին թշնամու բանակի ինչքը եւ աւարը, արձակելով գերիներին եւ կապեալներին, որոնց մեծ բազմութեամբ բերին Բաջարվան:

Լարաշին այստեղ ստացաւ Լիշամի թուղթը, որով նա հրամայում էր նորա իւր մօտ գալ, նշանակելով իւր եղբայր Մաւրամայ ի. Արտուշադիքին Լայաստանի եւ Ասորպատականի վերայ, Գալով (իւր պաշտօնատեղը) Մաւրամայ արշաւեց սաստիկ ձմեռային ժամանակ թուրքերի դէմ եւ անցաւ Բաբից, նոցա հետամնաւ լինելով:

114 թ. Լիշամ ի. Արտուշադիքը դրեց Մըրվան ի. Մուհամեդ ի. Մըրվանին, իւր հօրեղբորորդուն, Միշնադեքի Ասորպատականի եւ Լայաստանի վերայ կառավարիչ: Վերջինս գտանում էր Մուսլամայի զօրքի հետ Լայաստանում: Մըրվան մտաւ խաղաքաց երկիրը, առապատակեց եւ աւերեց, աւարի առաւ եւ գերեց, հասնելով մինչեւ երկրի սահմանները, ուր նա մնաց առ ժամանակ մի, մինչեւ թշնամուն նուսճեց եւ պատժեց նորան: Ապա մտաւ Սարիր թապաւորի երկիրը, որի բնակիչների հետ նա պատերազմեցաւ եւ առաւ նորա բերդերը. թափաւորը նորան հպատակեցաւ եւ խաղաղութիւն կապեց՝ նորան 1000 սուրկով, 500 այր եւ 500 կիւն, սեւ մաշեցով (տալա), եւս 100.000 մաֆա՝ Բաբ (քաղաք) մատակարարելու պայմանով: Մըրվան հաշտութիւն հաստատեց Տուճանի բնակչաց հետ՝ 100 զլւան կիսակէս, եւս 20.000 մաֆա տալու պայմանով: Նմանապէս Զերիկիւրանի իշխանը, որի երկիրը նա մտաւ, հաշտութիւն կապեց նորա հետ՝ ապալով համբին, որի բնակիչը նորան դիմադրեցին, նա պաշարեց եւ առաւ նոցա ամրոցները:

Առաջանաւ նուսճեց խաղաղութեամբ. Թիրշանշահին նա պարտաւորեցրեց տարեկան 10.000 մաֆա Բաբ մատակարարել: Ապա Մըրվան բանակեցաւ Լակիի իշխանի բերդի հանդէպ, որ հրժաւեցաւ նորան հարկ տալ եւ զնաց պարելու խաղաքաց թափաւորին, սակայն սպանեցաւ նետով մի հովիւից, որ նորան չմտնալեց: Այն ժամանակ Մըրվան խաղաղութիւն հաստատեց Լակիի բնակչաց հետ եւ դրեց նոցա վերայ մի կառավարիչ, իսկ ինքն զնաց Եարուան բերդը, Ժովի ափին, որ նորան հպատակեցաւ, այնտեղից Երովդէք, որի ժողովրդի հետ նա պատերազմեցաւ եւ ապա վերագարձաւ:

117 թ. Մըրվան ի. Մուհամեդ, Լայաստանի կառավարիչը, ուղարկեց երկու զորադուռ, որոնցից մէկը նուսճեց Ալաններից երեք բերդ, իսկ

1 իմա Արաշ: Լեզնիակին միւսն Արտա՝ Տիւնը (որ միանգամայն համապատասխան է մեր Ժողովրդական (Արտա-ին) տարբերում է միւս արաբացի մասնագործի անվանական ալ-տան (կարգու աստու) սլոյնայե ձեւից: 2 Զարաբին (տե՛ս վերեւ) միջատավում է այս դեպքը

115 թ.:

1 Ալեշանշելու է՝ գարի եւ ցորեն:

2 իմա՝ 50 այր եւ 50 կիւն

3 Բեւեզորի (տե՛ս վերեւ) Թարթարաբանշահ: Անո

յայտ:

1 Ասորպատականի գաւառներից մէկը, որի համանուն է քաղաքը՝ ըստ Առաքելի տեղեկութեան՝ Արտաշիւց 10 փարսան հեռի կը գտնուէր

միտք՝ բանակեցաւ Տումանյանի երկրում, որի ժողովուրդը նորա հետ խաղաղութիւն հաստատեց:

118 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ուսնիսի՝ երկիրը երեք կիրճերից, Ուսնիս փախաւ խաղաղաց մաս եւ մտաւ մի ամրոց, որ Մըրվան պաշարեց, գնելով նորա առջեւ իջնի: Ուսնիս սպանեցաւ. սպանողը ուղարկեց նորա զուգը Մըրվանին, որ ցոյց տուեց այն ամրոցաբնակներին. սոքա անձնատուր եղան նորա դատաստանին. Մըրվան սպանել տուեց ուղղակիներին, իսկ կանանց գէրի տարաւ:

119 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ալանաց երկիրը, այնտեղից չուեց գնաց խաղաղաց երկիրը. անցնելով Բաշաւ-Ջարի՝ եւ Սամանգարի՝ մտնոյ նա հասաւ Սպիտակ (քաղաքը)<sup>1</sup>, ուր գտանոււմ էր խաքանը. վերջինս փախաւ նորա առջեւ:

120 թ. Հայաստանի եւ Ասորպատականի կառավարին էր Մըրվան ի Մուհամմէ:

121 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ եկաւ Սարիի տահմական բերդը, սպանեց, գերեց. գալով երկրորդ բերդը նա նմանապէս սպանեց, գերեց: Ապա մտաւ Ղառնիկ ամրոցը, որտեղ կը գտանուէին թագաւորի գուտարը եւ նորա աթոռը. թագաւորը այնտեղից փախտաւ և բնկաւ խիլաշ ամրոցը, ուր էր նորա սակահաւաթ սար. Մըրվան հետեւեց նորա. այն ժամանակ թագաւորը խաղաղութիւն կապեց նորա հետ՝ տարեկան 1000 սարուկ եւ 100.000 մաւա՝ նորան տալու պայմանով: Մըրվան ապա մտաւ Աղուբթարան երկիրը, որի իշխանը հայտնութիւն հաստատեց նորա հետ, որպէս եւ Տուման երկրի իշխանը: Գալով Համզին երկիրը նա պաշարեց նորա ամրոցը մի ամիս շարունակ, մինչեւ (քնակիչք) խաղաղութիւն կապեցին: Մասդաղ (?) երկիրը Մըրվան նուաճեց խաղաղութեամբ: Արիստուժ բանակելէն նորա հետ հայտնութեան գաշն կնքեցին Տարաբարան, Ֆիլան եւ ծովափնայ բլուր գաւառները, որոնք Հայաստանում Տարաբարանի հանդէպ կը գտանուէին:

126 թ. Եղեգ քերեց Մուհամմէ ի Մըրվանին կառավարիչ Միշագեաթին, Հայաստանի, Մուսուլի եւ Ասորպատականի վերայ, նշանակելով (նորա սրբի) Մըրվանին գաղտնաստանէ գործերի վարիչ եւ տարով նորան մի գաւառ:

132 թ. Ուսնիսում Սայիգ ի. Հիշամ եւ նորա հորեղբորդին այլ բանտարկեալների հետ հանդերձ սպանեցին բանգապետին եւ դուրս ելան բանդից: Խառանի բնակիչք խուռն բազմութեամբ կոտորեցին նոցա, ի թիւս որոց եւս Զորբորդ Հայոց իշխան Առաքանին:

1 Թուրք թէ Աղուանից երկրում:

2 Jakut կանաւանի Բաղէ-Արաբի (Դերբենդի) մաս: Հիմա Բալուէթ թերթեանի գիւղէ Դերբենդից հարաւ, այժմ երկամուրու կայսրան:

3 Istaxri յիշում է խաղաղաց մայրաքաղաք Խափի (Հալաբեքան) եւ Բաղէ-Արաբի մէջ: Ուրեմ Բաղնիշաբեց հիւսիս:

4 Jakut կը յիշէ Բիլք քաղաք խաղաղաց երկրում. պարելու է Դերբենդից հիւսիս այժման Պետրովի քաղաքի մոտերը:

132 թ. Արու-Արբաս (ամիրապետը) քերեց իւր եղբայր Արու Ջաֆարին Միշագեաթին, Հայաստանի եւ Ասորպատականի վերայ կառավարիչ:

Նոյն թ. (Արու-Արբաս) Մաֆֆահ ուղարկեց իւր եղբայր Մանսուրին կառավարչի պաշտօնով Միշագեաթը, Ասորպատական եւ Հայաստան: Կառավարչի օգնականն էր Արու Ջաֆար ի Մուհամմէ ի Ալի:

133 թ. յունաց կայսր Կոստանդին արշաւեց Քալի-Քալա (Կարին) եւ բանակեցաւ խիսա դաշտում, առաջ ուղարկելով Կուշան հային, որ պաշարեց քաղաքը: Բնակիչներէց երկու հայ եղբայրներ պեղեցին պարսպի աւերակ տեղը. Կուշան իւրայիններով նորա մտաւ, սիրեց քաղաքին եւ սպանեց այրերին, իսկ կանանց գերեց:

134 թ. Հայաստանի կառավարիչն էր Եղեգ ի Ռապոյ:

(Էրբան-Իլի):

Բ. ԽԱՆԱԹԵԱՆՑ



## ՍԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԻԹԹԵՐ ԳՕԹԻ ԳՆՍՍՏՆԵՆԳԻՐԷ ԵՒ ՀՈՅՈՑ ՀԻՆ ՔՈՂՈՔՆԵՆԵՐԿԱՆ ԻՐԵՒԱՆԷՐԸ

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԻ

ԴԱՏԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ  
ԸՍՏ ՄԻԹԹԱՐ ԳՕԵԻ

Ա.

ԴԻՊԼՈՄԱՆԻՔ:

(Էրբան-Իլի):

III.

Ըստ "Հայոց Դատաստանագրքի", հոգեւոր կամ եկեղեցական դատաստանին ենթակայ են նախ՝ այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են եկեղեցուն — "զեկեղեցւոյ դատաստան եպիսկոպոս հոգացելո", եւ ապա այն բոլոր գործերը, նոյն իսկ աշխարհական, եթէ այդպեղ չկան մարմնաւոր իշխանութեան ներկայացուցիչներ — "եւ ի տեղում, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է յեպիսկոպոս տալ զայս յաւանդ, զի գամենայն դատաստանն սոքա հոգացան" (Նախ, գլ. Ե, եր. 26): Ի՛նչ տեսակ գործեր Տարկ ե հասկանալ առաջին զեպեւում: Ինչպէս կը տեսնե՞ն ընթերցողը, Միթթար ԳՕԻ որոշումն այդ առարկայի վերաբերմամբ խիստ առաձգական է. այդ կարգի գործերին քրիստոնէական եկեղեցւոյ հայեացակետով կարելի էր գտնել մի ամբողջ շարք իրաւաբանական երեւոյթներ, որոնք դատաստանական ենթակայութեան տեսակէտից կարող էին տարաձայ-